ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 78-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 4-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 4-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել 11-րդ կետի 25-րդ, 25-րդ կետի 4-րդ և 5-րդ, ինչպես նաև՝ 27-րդ կետի 1-ին և 6-րդ ենթակետերը.

2) 25-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետ.

«5.1) Ոստիկանության գվարդիան.».

3) 27-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին ենթակետ.

«1.1) Ոստիկանության գվարդիայի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները.»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 1-ից:

3. Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից դադարեցնել՝

1) Ոստիկանության զորքերի, դրան ենթակա գնդերի և գումարտակների գործունեությունը.

2) Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության, դրան ենթակա գնդի, գումարտակի, վաշտի, բաժինների, ռազմականացված ջոկատների գործունեությունը:

4. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության պետ-ներքին գործերի նախարարի տեղակալին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո՝ երկամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հաստատմանը ներկայացնել ոստիկանության գվարդիայի հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման գործառույթների իրականացումը Հայաստանի Հանրապետության մարզերում լիարժեք կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ՝ ոստիկանության գվարդիայի տարածքային ստորաբաժանումների ձևավորման պլանի նախագիծ:

Արփինե Սարգսյան
30.10.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ